

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 55-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆԻ

Ծնած է Հալէպ՝ 1940-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Սահակեան Ազգային Վարժարանին մէջ, որը ււարտած է 1956-ին և անմիջապէս անցած Երուսաղէմ՝ իբրեւ սան ժառանգաւորաց Վարժարանի, որուն ընթացքն ււարտած է 1960-ին և սարկաւազ ձեռնադրուած է Օգոստոս ամսուն: Անկէ ետք հետեւած է Ս. Աթոռոյս Ընծայարանի եռամեայ դասընթացքներուն: 1963-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ, ձեռամբ օրուան Պատրիարք Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի:

1963-1968 տարիներուն եղած է Սրբոց Յակոբեանց Տպարանի Տեսուչ: Նոյն տարիներուն եղած է նաեւ Աստուածամօր Սուրբ Տաճարի տեսուչ:

Ապա մեկնած է Ամերիկա, եղած է հովիւ Գալիֆորնիոյ Սաքրամենթօ շրջանի հոգեւոր հովիւ և Առաջնորդարանի քարտուղար: Գալիֆորնիա գտնուած տարիներուն ուսանած է Գալիֆորնիոյ Համալսարանի մէջ:

Երեք տարի եղած է Տիթրոյթի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

1993-1999 տարիներուն հոգեւոր հովիւն էր Պէյսայտի Ս. Նահատակաց եկեղեցւոյ:

1999-էն ցայսօր յոբելեար Հայր Սուրբը Տեսուչն է Ս. Յարութեան Տաճարի:

2014-էն Վարիչն է Պատրիարքութեանս Ելեւմտից Տեսչութեան:

Իր բազմամեայ քահանայութեան ընթացքին Հայր Սուրբը երկար տարիներ եղած է ուսուցիչ Աբ. Թարգմանչաց Վարժարանի և ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի, ինչպէս նաեւ անդամ Տնօրէն Ժողովի:

Հակառակ իր վարած պատասխանատու և բազմազբաղ պաշտօններուն, Հայր Սամուէլ եղած է գրչի և ուսումնասիրութեանց մարդ և մեզի ձգած երեք աստուածաբանական թարգմանութիւններ և յօդուածներ:

«Միոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և բովանդակ Միաբանութեան, կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Ձեռնադրութեան 55-ամեակը, և կը մաղթէ որ Աստուած օգնական ըլլայ և զօրացնէ անոր, պարգեւէ եկեղեցաշէն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Աթոռի:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ

Ծնած է Երուսաղէմ՝ 1945-ին, Սեբաստացի ծնողքէ: Նախնական կրթութիւնը ստացած է Աբ. Թարգմանչաց Վարժարանին մէջ, որուն Նախակրթարանի ընթացքը ււարտած է 1959-ին: Ապա հետեւած է արհեստի: Կրօնաւորելու փափաքը ունեցած է կանուխէն, և դիմում կատարած է վանական իշխանութեան՝ 1977 Հոկտեմբեր 1-ին